

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՓՈԽԱԴԴՐԱԿԱՆ,
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. մայիսի 3-ի «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ասեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011թվականի ապրիլի 22-ի N 391-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 388-Ն հրամանի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. մայիսի 15-ի «<< 2011-2012 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը հաստատելու մասին» N 465-Ա/Ք հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝
 - 1) 2011-2012 ուսումնական տարին ավարտել մայիսի 25-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ առաջին դասարանների, 32 ուսումնական շաբաթ երկրորդ դասարանների և 34 ուսումնական շաբաթ՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար.
 - 2) 2011-2012 ուսումնական տարվա շրջանավարտների «Վերջին դաս» խորագիրը կրող միջոցառումներն անցկացնել միայն դպրոցներում՝ դասացուցակով նախատեսված վերջին դասաժամին.
 - 3) բնակության վայրից դուրս դպրոցականների էքսկուրսիաների և այլ միջոցառումների կազմակերպումը համաձայնեցնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ, ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ դպրոցականների առողջությունն ու կյանքի անվտանգությունն ապահովելու համար.
 - 4) 2011-2012 ուստարվա աշակերտների փոխադրման (գիտելիքների ստուգման), ավարտական և պետական ավարտական քննությունները կազմակերպել

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012թ. մայիսի 3-ի N 388-Ն և 2012թ. մայիսի 15-ի N 465-Ա/Ք հրամաններով հաստատված կարգերի պահանջներին համապատասխան.

5) ս/թ հունիսի 30-ին կազմակերպել 9-րդ դասարանների շրջանավարտներին՝ հիմնական կրթության վկայականների և 12-րդ դասարանների շրջանավարտներին՝ միջնակարգ կրթության ատեստատների հանձնման արարողությունը.

6) սույն կարգադրությունը ընթերցել բոլոր դասարաններում և մասսայականացնել ծնողական ժողովներում:

2. Հաստատել 2011-2012 ուսումնական տարվա մեդալի հավակնորդների «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից կենտրոնացված կարգով քննությունների նախապատրաստման և անցկացման հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Մեդալի հավակնորդների «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաներից կենտրոնացված քննությունները կազմակերպել Գավառի N 4 հիմնական դպրոցում:

4. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը /պետ՝ Գ. Բադալյան/ մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում վերահսկել սովորողների փոխադրման (գիտելիքների ստուգում), ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման աշխատանքները:

5. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին /վարիչ՝ Հ. Շահբազյան/ տեղական մամուլով, հեռուստատեսությամբ և ռադիոյով լուսաբանել քննությունների ընթացքը:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:

7. Կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ